



Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

6306

ԿՈՄՍՈՄՈԼ

ՀԱԿԱԳՐՈՒԱԿԱՆ
ԿՈՄԵԴԻԱ

891.99
7-26

ԹԻՖԼԻՍ—1930

'22 JUN 2007

891.99

7-26

Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

19 NOV 2011

ԿՈՄՍՈՄՈԼ

Հակակրօնական կոմիտեի 2 գործադ.



6306

Թ-191.Խ-1930

29.08.2013

27430

ՏԸՆԿԱՆ
ՏԸՆԿԱՆ

ԿՈՄՍՈՄՈԼ

Հակակըռոնական կոմեղիա 2 գործողությամբ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

1. ՈՀԱՆ—ապեր (60 տ.):
2. ԽԱՆՈՒՄ—սրա կինը:
3. ԱՐՑՈ — } սրանց թոռները—
4. ՑՈՂԻԿ— } կոմյերիտականներ:
5. ԶԱՌՆԻՇԱՆ— սրանց մայրը:
6. ՏԻՐԱՅՈՒ ԲԱՂԴԱՍԱՐ:
7. ԶԱՎԱՀԻՐ—սրա հարուր:
8. ՍԱՔՈ—բոռնեցք:
9. ԳԱՐՄՈ—վաշխառու:



17200 - 58

Գրառեպիար 59:

Պատվեր 906:

Տիրաժ 2000:

Թիֆլիս, Փ. Տ. Գ. Խ. Պոլ. Տրեստ 6-դ տպ.: Կրցիովելի Փ. № 3:

Բ Ե Մ Ը

Առաջին գործողություն:—Գյուղական տան սենյակ (վճռ խրճիթ). աջ կողմից մուտքի դուռ. դիմացի պատին փոքրիկ պատուհան. ձախ պատի տակ թախտ—վրան կարպետ և մութաքաներ: Թախտին թինկը տված նստած և Ոհան-ապերը, չիբուխը ձեռին: Վարագույրը բացվում է, Ոհանի կին—պառավ Խանումը մի բոպե ընդհատելով իլիկ մանելը, լուսամուտից դուրս և նայում, վորտեղից լսվում է կոմյերիտականների խմբի «Ինտերնացիոնալ» յերգը: Խոսակցության միջոցին Խանումը շարունակ իլիկ և մանում:

Յերկրորդ գործողություն—Նույնպիսի մի սենյակ, յերկու լուսամուտով, վորոնք ծածկված են վարագույրներով: Թախտի վրա զցած և խալիչա (գորգ), վորի վրա նստած և տիրացու Բաղդասարը և ակնոցներն աչքին (ծերունիների պես քթին դրած) լրագիր և կարգում: Այս սենյակն առաջին գործողության սենյակից տարբերվում է մի քիչ իր ճոխությամբ: Սենյակի մի անկյունում դրված և սեղան—տաքուրետներով:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԻՆ

Տես. 1.

ՈՀԱՆ ՅԵՎ. ԽԱՆՈՒՄ

Վարագույրը բացվում է—բեմի լեռնվից լավամ և «Ինտերնացիոնալ»-ը:
ՈՀԱՆ—Ախճի Խանում, այ ախճի... (հազում է):

ԽԱՆՈՒՄ—(Յերեսը դարձնում է դեպի Ոհանը) Հը՛, ԲՇչ ես ասում:
ՈՀԱՆ—Ի՞նչ ես կտի ետ լիսամուտիցը:

ԽԱՆՈՒՄ—Թամաշ յեմ անում, թե վոնց են յերգ ասում մեր կոնցոմուները:

ՈՀԱՆ—Հարսըդ կին-բաժին գնա, թոռներդ կոնցոմոլ դառնան, դու ել նրանց թամշա արա, ոխայ... շենացավ Ոհանի տունը, ել ԲՇչ դարդ...

ԽԱՆՈՒՄ—Մի անս տեսամ, ԲՇչդ ա պակաս, այ մարդ, վոր թօնթորում ես: Սոված ես, ծարավ ես, տկլոր ես, վարըդ ա մնացել, ցանքսդ ա մնացել, ԲՇչ ա պատահել...

ՈՀԱՆ—Պատահածը քիչ ա, ել պատահի... սազ աշխարհը տակն ու վրա յեն արել. քյոխվա չկա, սուզյա չկա, տերտերը մեռել ա, տերտեր չեն ջոկում, խալիսի միտքը հենց պղառել են, վոր ոչ-ով չի ուզում տերտեր դառնա. չորս ամիս ա զանգակի ձեն չեմ լսել հիմի ել ասում են—յեկեղեցին թատրոն են շինելու:

ԽԱՆՈՒՄ—Շինում են, թնդ շինեն, քեզ ինչ... ժամիցը շատ ես խեր
արել... Քու փայ ժամը քու լծկանն ա, քու մանգեղն ա, հողն ա, ժամը քեզ
հաց ա տալի՞...

ՈՀԱՆ—Ա՛ կնիկ, սարսադվել ես... ետ ի՞նչ լեզվով ես խոսում. թռուներդ,
ետ կանցոմոլ լակոտնին քեզ ել են հեղափոխիլ... զիմ-զիմ ի՞նչ ես զուս տա-
լի, բա յես աչքս բաց, տենամ ժամը թատրոն շինած...

ԽԱՆՈՒՄ—Ռւղում չես տենաս, աչքերդ հուպ արա, փակի:

ՈՀԱՆ—Մեղա, մեղա... Բա հիմի քու ասելովը—գան տունս քանդեն,
ձեն չանեմ, ելի...

ԽԱՆՈՒՄ—Տձենդ իսի յեն քանդում:

ՈՀԱՆ—Բա են տունը, աստծու տունը վոր քանդեն, յես դատաստանի
որն ի՞նչ ջուղար տամ:

ԽԱՆՈՒՄ—Դու աստծու վեքին ես, նրա աղվակատը...

ՈՀԱՆ—Բա զու կրնցոմոլի վեքին ես...

ԽԱՆՈՒՄ—Յես մենակ իմ վեքին եմ: Ի՞նչս ա պակաս, մի ջուխտ
յեղն ունեմ, մի կով. աղես ու ճարսս դոչապ, հրեն կոլեկտիվումը դրված,
հենց են բան անում, վոր սաղ գեղը նրանց գովքն ա անում. մի տղա, մի
աղջիկ ել թռուներ ունեմ, յես նրանց ջանին մատաղ, խելոք, ժիր, աչքա-
բաց, կոնցոմոլն ու պիտնին իրանց ձեռին. ժողով ասես—նրանք հրեն զըլ-
խին, տոն ասես, նրանք առաջինն են. տատը մեռնի նրանց աղիկ ջանին,
քեզ ու ինձ զիմներին գրած պահում են. որես զենն ել ինձ, յա քեզ ի՞նչ
ա պետք. սաղ ապրենք, լավ ապրենք. թե չե մեզ ի՞նչ կքանդեն թե կշինեն.

որես դենն աշխարհն իրանցն ա, վոնց վոր կուզեն՝ թող ընենց ել ա-
նեն...

ՈՀԱՆ—(Զայրացած) Զենդ կտրի, ձենդ կտրի, անհոգի, անսատված,
հրես վեր կենամ ես գավազանը վրեդ փշրեմ, գլուխդ շան փայ շինեմ...

ԽԱՆՈՒՄ—Դե, բա ել ի՞նչ ենք պարապ նստել, հազիր վեր կաց, ելի,
զու գավազանդ առ, յես ել շերեփս վեր ունեմ, իրար տանք, ես խալիս ել
մի լավ թամաշա անի...

ՈՀԱՆ—(Զայրացած) Սպիչկեն դեսը տուր չիբուխս վասեմ. լեզուդ քեզ
քաշի:

(Խանումը տալիս է լուցկին. Ոնանը վառում է շիբուխը, հազում, փնրփնրում:
Դրսից լսվում է Արտոյի ձալին):

ԱՐՏՈ—(Դրսից) Հնկերներ, ցրվեցեք տները, հաց վերցրեք հետներդ:
Կես ժամից բոլորդ այստեղ լինեք, վոր գնանք:
Պիռն. ԽՈՒՄԲԸ—(Դրսից) Միշտ պատրաստ: (Արտո—Ելեւ ե մենում):

Տես. 2.

ՆՐԱՆՔ ՅԵՎ ԱՐՏՈ

ԱՐՏՈ—(Մենում ե յերգելով) «Այս հին աշխարհը կփորենք մենք մին-
չև հիմքերը և հետո»...

ՈՀԱՆ—(Խանումին) Քառացած անգածովդ իմանում ես ի՞նչ ա ասում
ետ վոչ ու փուչը. մսա, թնդ մին ել կրկնի—(Արտոյի ավելով) «Այս
հին աշխարհը կքանդենք մենք...»—կքանդեք, բաս, կքանդեք, տափը դեմ

ձեր բոյը, ուրիշ բանի հո շնորհք չունեք: Քանդեցեք, տեսնանք քանդելուց հետո մի բան կարաք շինեք... Հենց քանդելու յեք դոչաղ... սև ըլի ձեր խրատ տվողի յեկած ճամբեն: (Արտօն ըլարած է):

ԽԱՆՈՒՄ—Խելքդ կորցրել ե՞ս, այ մարդ, ի՞նչ ես անիծում ես երեխին: ՈՀԱՆ—Անեծք... անեծքը քիչ աղքանց ու դրանց պեսերին. խոսացրու տես հալա ի՞նչ անաստված բաներ ա ասում:

ԽԱՆՈՒՄ—(Եղելով Արտօնին) Ի՞նչ ա ասում վոր... ՈՀԱՆ—Ի՞րան հարցրու. ասում ա յերկիրը կոր ա, պտույտ ա գալի, արեն ա կանգնած միթամ:

ԱՐՏՈՒՐ—(Միծաղելով) Հա, հա, հա, պապի ջան, շատ ես նեղացել... դե բա կոր ե, ի՞նչ ասեմ...

ՈՀԱՆ—Տն, փչացած, բա ես սարերն ու քոլերը, ես ձորերն ու քարերը աչքդ չեն մտնում... ես դայդի կոր կըլի...

ԱՐՏՈՒՐ—Պապի ջան, պապի, խնձորը հո կոր ե. այ, ինչպես ետ կոր խնձորի կեղել ծալմվում, դար ու փոս ե լինում, կամ ինչպես ընկույզի կճեպը խորթ ու բորդ ե, ենպես ել յերկրի կեղել:

ՈՀԱՆ—Ետ ասենք թե ետ մի սուտին հավատացի. բա են վժնց ա, վոր պտույտ ա գալի, ախըր վժնց ա պտույտ գալի յե, վժնց. թե պտույտ ա գալի, խի՞ մի առավոտ վեր չեմ կենում տենում մեր տունը թիվլիդ ա հասել... Ետ թե արել կանգնած ա, բա յես վժնց եմ աչքս բաց անում թե չե, տեսնում եմ հրեն, արեն ենտեղից դուս եկալ ու կամաց-կամաց դնաց... ենտեղ ել մեր մտավ...

ԱՐՏՈՒՐ—Հա, հա, հա... Պապի ջան, այ, թե ետ վոնց ե լինում. դե, լավ մտիկ. հենց իմանանք թե դու արեն ես. արել մի քանի միլիոն անդամ յերկրից մեծ ե և շատ հեռու. յես փոքր եմ—յերկիրը. վոնց վոր արեն ես տեսնում—կլոր ե, ենպես ել յերկիրը. հիմի դու ել ես կլոր, յես ել. թե եսպես եմ կանգնած, առջեխս կողմը լուսավորում ես, ես ցերեկն ե, յետեխս կողմը մութն ե, ես ել դիշերն ե. յես հիմի պտույտ եմ գալի, այ, եսպես. հիմի յետեխս կողմը ցերեկ ե, առաջիս կողմը—գիշեր: Եսպես դու կանգնած ես, յես հա պտույտ եմ գալի, պտույտ եմ գալի, պտույտ եմ գալի... (Ասում ե ու շարունակ պտույտ գալիս արագ-արագ):

ԽԱՆՈՒՄ—(Միծաղելով) Հա, հա, հա, պապի մատաղ, Արտոն ջանկաց, կաց, գլուխդ պտույտ կգա, վեր կընկնես... (ուզում ե բռնել):

ԱՐՏՈՒՐ—(Շարունակելով նույնը) Ես առավոտ, ես կեսոր, ես իրի կուն...

ՈՀԱՆ—(Տեղից վեր ե կենում յեկ սկսում շիբուխով հարվածել) Ես ել գիշեր, ես ել կես գիշեր, ես ել լուսաբաց...

ԱՐՏՈՒՐ—(Ընդհատելով) Պապի ջան, պապի, ախըր արել յերկրին չի ծեծում, դու ինչու յես ինձ ծեծում:

ԽԱՆՈՒՄ—(Միջամտելով) Այ մարդ, գժվել ե՞ս, ի՞նչ ես ուզում ես քորփիցը:

ՈՀԱՆ—(Զայրացած, նեվալով ու հազարով գնում ե իր տեղը) Եղ հալա դրան քիչ ա. տանիցը գուս եմ անելու, գնա կորչի, ետ տեսակ ժառանգն ինձ պետք չի:

ԽԱՆՈՒՄ—Վայ քու շաշ խելքին ինչ ասեմ, վոր ես երեխին գլուխ ես զրել: (Նոյում ե Արտայի գլուխը) Սովորեցրել են, ոա ել ասում ա, քեզ վնաս ա տալիք...

ՈՀԱՆ—Յես դրա սովորցնողի գլուխն ել կկոտրեմ ես գավազանովը. նա ել ա կոնցոմով, միթամ թե վարժապետ ա. յես ել ասեմ խելքը գլխին մարդ ա. են որը գեղամիջումն ասում ա—անձրեն արևիցն ա առաջ գալիք: Դե քեզ եմ հարցնում, ա կնիկ, արել վոր կա, կրակ ա, իսկի տեսել ու իմացել ես, վոր կրակիցը ջուր դուրս դա, հ՞ը... դե ջուղար տու, յե...

ԱՐՏՈ—Պապի ջան, ետ ել գրուստ ա ասում. ուզում ես բացատրեմ...

ՈՀԱՆ—(Ձեզնելով) Բացատրեմ... կարաս ելի մի սատանական զրից ասես: (Ներս ե վազում Ցողիկը):

Տես. 3.

ՆԲԱՆՔ ՑԵՎ, ՑՈՂԻԿ

ՑՈՂԻԿ—Ո՞հ, ենքան վագեցի, վոտներս ես ե կոտրատվում են:

ՈՀԱՆ—Պակասը դու եյիք: Ո՞ւր եյիք վազ տալիք. ի՞նչ բան ունես չուտմը... Տանը վեր ընկնես, ի՞նչ կըլի...

ՑՈՂԻԿ—Վայ, պապի ջան, ինչու յես բարկացած. հո մի վատ բան չեմ արել. գնացել եյիք բոլոր պիոներներին հավաքեմ, վոր գնանք ՄՈՊՐ-ի պարտեզը ջրենք:

ՈՀԱՆ—Կջրեք, վճնց չե. յերկնքից կրակ ա թափվում մեր գլխին... Գնաս մեր բախչեն ջրես, վոտդ կկոտրի...

ԽԱՆՈՒՄ—Ա՛յ մարդ, երեխեքս երեկ են ջրել մեր բախչեն, ի՞նչ ես ուզում սրանցից:

ՈՀԱՆ—Քու բանը չի, յես գիղամ ինչ եմ ուզում. ի՞նչ բան ունեն ուրիշի հետ. ում բախչեն են ջրում:

ՑՈՂԻԿ—ՄՈՊՐ-ի:

ՈՀԱՆ—ՄՈՊՐ-ին ով ա, ի՞նչ ա...

ՑՈՂԻԿ—Ա՛յ, պապի ջան, հեռու-հեռու յերկրներ կան, վորոնց ասում են Ցեվրոպայի յերկրներ. ենտեղ խորհրդային իշխանություն չի. ենտեղ տանջում են բանվորներին և գյուղացիներին. նրանց բանտարկած պահում են, քաղցած. նրանց ընտանիքներն ել են շատ նեղության մեջ. այ ետ մարդկանց պետք ե ոգնենք: Մեր գյուղխորհուրդը վորոշեց, այ են կուլակ Սաբոյի պարտեզի մի մասը հատկացնել ՄՈՊՐ-ին, այսինքն՝ մեզ, պիոներներին ու կոմսոմոլներին, վոր մենք ել վարենք, ցանենք ու ինչ ել վոր բերք ստացվի, ծախենք ու փողն ուղարկենք մեր հեռու, բանտարկված ընկերներին:

ՈՀԱՆ—Հա-ա... Բա գուք ել ուրիշ բան ու գործ չունեք...

ՑՈՂԻԿ—Պապի ջան, բա ես գործ չի...

ՈՀԱՆ—Վանց չե. լավ գործ ա. խալիսի բախչեն խլեք, նրա երեխանց հացը կտրեք, թե ինչա ինչ-վոր հեռու յերկրում դալա քաշող մարդկանց պետք ա ոգնեք: Խի յեն ծուռ բան անում, վոր դալա յեն նստացրել, ով գիղա ի՞նչ գող ու ավազակ ենս...

ԱՐՏՈ—Նրանք գող ու ավազակ չեն. գող ու ավազակը կուլակ Սաքոն ա ու նրա պեսերը:

ՈՀԱՆ—Զենդ կտրի, քեզ չեն խոսացնում: Բա են գեղի առաջի մեծ
արտն ում համար եք ցանել:

ՅՈՂԻԿ—(Ծիծաղելով) Զեմբերլենի:

ՈՀԱՆ—Ետ ել ի՞նչ շուն ա:

ՅՈՂԻԿ—Ա՛յ, լավ ասեցիր, պապի ջան, թամամ վոր շուն ա: Ետ քու
ասած մեծ արտը կոչվում է «Մեր պատրասխանը Զեմբերլենին»: Զեմբերլենն
ուզում ե մեր յերկիրը, մեր Խորհրդային Միությունը վոչնչացնի, նա այերո-
պլաններ ու թունավոր գաղեր և պատրաստում մեր յերկիրը վոչնչացնելու
համար, մենք ել ունենք Ավիաքիմ, վորը նրա գեմ կովելու և մեր յերկիրը
պաշտպանելու համար պատրաստում ե այերոպլաններ և հակագաղեր. արտը
հնձելու յենք և ստացված ցորենը հատկացնենք Ավիաքիմին:

ՈՀԱՆ—Մի արտով կոփ եք անելու ելի. վայ եղ կովին...

ՅՈՂԻԿ—Ինչու մի արտով, պապի ջան, Խորհրդային Միության մեջ
գանվող ամեն մի գյուղ, վոր մի արտ ցանի Ավիաքիմի համար, քաղաքների
բանվորությունն ել իր բաժինը կտա, ու այերոպլաններ կշինենք, կնստենք
ու թը՛ռո... թը՛ռո... (Թեվերը բափահարելով): Դե, Զեմբերլեն, դե, Մուսո-
լինի, դե, ֆաշիստներ, պինդ կացնեք գալի՛ս ենք...

ԽԱՆՈՒՄ—(Խանդադատանիով) Արեխու մեռնեմ, բալա ջան... (գրկում ե)

ՈՀԱՆ—Հա, հա, զրանք ջարդեցին, կովեցին, դու ել ուրախացիր, շաշ
տունդ քանդվի...

ԽԱՆՈՒՄ—Կանեն, կանեն, յես սրանց ջահել-ջիվան բոյին մա-
տադ:

ՈՀԱՆ—Վո՞նց չե. աստված հրեն կրակ ա վեր ածում, արտն ել կերպի,
բախչեն եր դրանք թող կրակից ջուր հանեն:

ԱՐՏՈ—Կհանենք, կհանենք:

ՈՀԱՆ—Զեր սարսաղ վարժապետի խոսքով...

ԱՐՏՈ—Գիտության խոսքով:

ՈՀԱՆ—Դե, պատմի, թե վոնց եք կրակից ջուր հանում:

ԱՐՏՈ—Ա՛յ, թե ինչպես ե լինում: Են հո տեսել ես, թե վոնց արել
ձյունը հալեցնում ե ու ետ հալոցից գոլորշի յե բարձրանում: Ետպես ել
նա շատ տաքացնում ե մեծ-մեծ ծովերն ու ովկիանոսները, վորոնցից շատ
գոլորշի յե բարձրանում դեպի յերկինք. ես գոլորշին շատ վոր հավաքվում
ե, դառնում ե ամպ. հետո ես ամպերը խտանում են ու սառչում, քամին ել
իրար ե խփում ու գըռո... գըռո... եսպես ահա, վոնց վոր ես բռունցքներս
իրար խփեմ (բռունցքներն իրար ե խփում յել ամպի նման գրո-գուացնում)
գըռո... մեկ ել տեսար անձրե յեկավ:

ՈՀԱՆ—Բա կարկուտը, ձյունը...

ԱՐՏՈ—Թե վերե ողը սառն ե, անձրեի ջուրը սառչում, կարկուտ կամ
ձյուն ե գառնում, թե տաք ե՝ անձրե ե գալիս:

ՈՀԱՆ—Հիմի վոր վեր կենամ ես չիբուխը գլխիդ փշրեմ, կարկուտ
կըլի, թե անձրե:

ԱՐՏՈ—Պապի ջան, մի բարկանա, ձեր ժամանակ աշխատանքային
դպրոց չի յեղել վոր ես բոլոր բաները սովորեցնեն. իսկ հիմի մենք գի-
տենք, թե ինչիցն ե առաջանում կայծակը, կարկուտը, յերկրաշարժը...

ՈՀԱՆ—Դրա համար ել անհավատ եք դառել. աստոծ չեք ճանաչում: Դրանք բոլորն աստծու սարքած բաներն են, հենց վոր մարդիկ ծուռ բան են անում, նա վերև նստած տեսնում առ պատճում, կամ յերաշտ առնում ձեր Զեմբերլենի արտն երում-խորովում, կամ կարկուտ աղարկում, ջարդում, փշում: Ենտեղ, այ ենտեղ, նրա ձեռին ադիվ...»

ՑՈՂԻԿ—(Փոքրկացնում ե) Ենտեղ... վորտեղ, յերկնքում...

ՈՀԱՆ—Հա, հենց յերկնքում. աստծու թախտն ենտեղ ա. ինչ ա, չես հավատիւմ...

ՑՈՂԻԿ—Ախըր, պապի ջան, վոնց հավատամ... Ո՞վ ե տեսել, վոր ետ ձեր աստված ասածը վերև, յերկնքում նստած ա... Գիտես պապի ջան, վոր մարդ շատ վերև բարձրանա, շունչը կկտրվի ողի պակասությունից, բացի այդ, նրա մարմնի ծակերից, են վոր քրտինք ե դուրս գալիս, արյունը կը-թափվի շոշապեն... մարդն արնաքամ կլինի, կմեռնի:

ԽԱՆՈՒՄ—(Փարարփելով Յոդիկին) Ա՛յ, խելքիդ մատաղ, եղ խելքիդ, այ, իմ խելքի բուն բալա:

ՈՀԱՆ—Հիմի ձեր ասելով, աստվածն արնաքամ ալել, մեռել, ելի...

ԱՐՏՈ—Թե վոր մարդ ա, շատ վաղուց ե մեռել:

ՈՀԱՆ—Դրա համար ել ձեր կոնցոմոլնին նրա տունը խլում են, ելի:

ԱՐՏՈ—Զենք խլում: Դատարկ շենք ե, զուր տեղը մնացել ե, վերցնում ենք մի բանի պետք ածենք. ակումք շինենք, թատրոն, խրճիթ-ընթերցարան, կարմիր անկյուն..., Զուր տեղն ինչու յե պարապ մնացել:

ՈՀԱՆ—Ձեզ ինչ ե, ձեզ ինչ... աստծու տունը չի, թող պարապ-սարապ իրեն համար կենա:

ՑՈՂԻԿ—Պապի ջան, ախըր ամեն մարդ մի տուն կունենա. այ, մենք վեց հոգի յենք, բայց մի հատ տուն ունենք միայն. Ետ աստվածը քանի տուն պետք ե ունենա... Ամեն գյուղում մի տուն, քաղաքներում ել... հենց վոր կողմը գնաս, յեկեղեցի կտեսնես: Անցյալ տարի մեզ վոր եքսկուրսիայով թիֆլիս տարան, պահ, պահ, պահ... Են ինչքան ժամ կար... մի հատն իրան բոլ չի...

ՈՀԱՆ—Մեղա, մեղա քեզ... ժամերն աչքերդ ծակեցին:

ԱՐՏՈ—Ձե, չե, մի են հարցըու, թե աստվածը, վոնց վոր դու յես ասում, յերկնքումն ե, ել յերկը վրա տունն ինչ ե անում...

ՑՈՂԻԿ—Ա՛յ, պապի ջան, վոր ուղիղ բան ենք ասում, բարկանում ես. թե սուտ ենք ասում. դու մեզ ապացուցի վոր մենք սիալ ենք, մեզ համոզի, վոր մեզ մոլորեցնում են...

ՈՀԱՆ—Հրես ես գավազանը, վոր վրեդ փշեմ, են վախտը կիմանաս սուտն ու զորթը:

ՑՈՂԻԿ—Պապի ջան, ետ վոնց կըլի, գավազանը հո գիտություն չի տալիս:

ԱՐՏՈ—Դրանց ժամանակ գիտությունը գավազանով են սովորեցնեմս յեղել:

ՈՀԱՆ—Գավազանով, բաս... գավազանով... Հիմի յել վոր գավազան լինի, հոտպես շաշ-շաշ չեք խոսի, կգնաք բան կսովորեք, աղոթք կանեք.

հենց դու, այ, դու, փուչ փչացած, կգնաս տերտեր կղառնաս, գեղը կը-
լուսավորես:

ՑՈՂԻԿ—(*Արտոյին աշխավ անելով*) Պապի ջան, եսոր մեր կոմսոմոլը գյու-
ղի համար նոր տերտեր ե բերել, իրուկունս գնալու յենք ժամ, վոր տես-
նենք, թե ինչ նոր բան ե սովորեցնում տերտերը, դու յել արի ականջ դիր:

ՈՀԱՆ—Հա-ա... մասխարա յես անում, ժամը թատրոն եք շինում,
վոր տերտերներին տնազ տանք... յես ձեզ շանց կտամ...

ԶԱՅՆ—(*Դրսից*) Արտան, ծողիկ, յեկեք, ձեզ ենք սպասում:

ԱՐՏՈՒՐ—Գալիս ենք, դալիս ենք... (*Արտոյ յեվ Յոդիկ դուրս*):

(Բեմի լույսը հանգչում ե. յետեկի կողմից ոեֆլեկտորը լուսավորում ե
պիոներների սիլուետները, վորոնք պիոներական բարե բոնած անցնում են
յերևալով լուսամուտի անցքից. Խանումը հիացած դիտում ե: Պիոներները
յերգում են «Պիոներական մարդ»-ը, կամ «Մենք դարրիներ ենք» յերգը.
Պառզավածք:).

Տես. 4.

ՈՀԱՆ ՅԵՎ ԽԱՆՈՒՄ

ԽԱՆՈՒՄ—(*Լուսամուտից նայելով*) Գնացին: Գնացեք, գնացեք, տատը
ձեզ մատաղ ըլի, այ իմ սիրուն բալեք: Մի տես, մի տես, ջուխտ-ջուխտ,
ջուխտ-ջուխտ, տղա ու աղջիկ խառը, կասես ծաղիկ ըլեն, ծաղիկ, յես ձեր
բոյին մեռնեմ: (*Լսում ե նեռացող պիոներների եւփորի յեվ բմբուկի ձայնը*)
Փառք տուր, այ մարդ, փառք տուր քո աստծուն, վոր խելոք ու աչքարաց
թռոներ ունես:

1900-1-58

ՈՀԱՆ—Երնակ քեզ... չես ասում թե աստվածն ուրացել են, լրացել,
տղա ու աղջիկ իրար խառնվել, ասում ես փառք տուր...

ԽԱՆՈՒՄ Շատ ել լավ են արել. չե, մեզ նման գնչները կապած, ան-
լեզու հայկան պետք ա ըլեն, անուսում, խավար:

ՈՀԱՆ—Դե, գնա ելի, դու ել գնա, զլուխտ բաց արա, բերանդ
բաց արա, մազերդ կտրի, մի կարմիր լաթի կտոր ել բողազիցդ կապի, վոտ-
ներդ տափը թակի: (*Ծաղրում ե, նեզնորեն արտասանում*): **ՄԵԿ**, յերկու, մեկ,
յերկու, ձախ, աջ, ձախ, ձախ աջ ձախ... այ ձախորդվի ձեր բանը հա...

ԽԱՆՈՒՄ—Ե՛, այ մարդ. պառակել ես, խելքդ կորցըել... ի՞նչ անեմ,
նրանց հասակի պտեմ, տես գնում եմ, թե չե...

ՈՀԱՆ Ետպես ես խոսում ե, վոր հարսդ հրեն աբուոը կորցըած, ժո-
ղովներումը հենց ա խոսում, հենց ա բղավում, կասես տղամարդ ըլի:

ԽԱՆՈՒՄ—Ամոթ ա, այ մարդ, հոգի ունես տալու աստծուն. իմ հար-
սի պես նամուսով ու աբուոով, խոնարհ ու բան անող հարսն ով ունի:
ՄԻ հալա հարցըու, տես կոլեկտիվի մարդիկն ինչ են պատմում ե...

ՈՀԱՆ—Ի՞նչ են պատմում, վոր նա աբուոը ծախած սրա-նրա հետ
բլրացնում ա... իմ տունն են որը յանդվեց, վոր հարսս հետս խոսաց, վոր
նրանից ծնած ոձի ճուտերն ել մեծ ու պստիկ չեն հարցնում, աստծուն
քարով տալիս են, հետս ել համարձակ խոսում:

ԽԱՆՈՒՄ—Փիս են խոսում... ատ ել ուրախանալդ ա, վոր աչքարաց,
գիտնական են...

ՈՀԱՆ—Մին ել դու յես գիտնակ ասում են վերև աստոծ չկա,
թռոներ ունես:



ՀԱՅ-ԱՐԴ

քրիստոսը սուտ ա, կնունքն ու մեռնը սուտ ա, սատանա ու հրեշտակ չկա,
դրախտ ու դժոխք չկա...

ԽԱՆՈՒՄ—Ասում են, թաղ ասեն, քեզ ինչ ա պակասում. քեզ հո դժո
չեն անում, վոր իրանց տաճին հավատաս:

ՈՀԱՆ—Բա զոռ չեն անում. միտքս պղտորում են, քիչ ա մնում հավատս
ուրանամ: ԶԵ, չԵ, պետք ա կամ վերջ տամ ես բաներին, կամ գլուխս առնեմ
կորչեմ. տունս սատաների բուն ա դառել (Ներս և մենում Զառնիշանը):

Տես. 5.

ՆՐԱՆՔ ՅԵՎ ԶԱՐՆԻՇԱՆ

ԶԱՐՆԻՇԱՆ—(Մտնելով) Բարի իրուկուն ձեզ:

ԽԱՆՈՒՄ—Բարին վրեդ ըլի, Զառնիշան ջան, հենց ապրես սամավարը
զցի, պապը չայ խմի:

ԶԱՐՆԻՇԱՆ—Ես բոպեյիս նանի ջան: (Աւզում ե զնալ):

ՈՀԱՆ—Կաց. քու չայն ինձ պետքը չի. դու գնա կոլեկտիվի հա-
մար սամավար զցի:

ԶԱՐՆԻՇԱՆ—(Նվարած) Ի՞նչ եմ արել պապի ջան:

ՈՀԱՆ—Հենց ետքանն ել բոլ ա, վոր հետս գեմ ու դեմ զրից ես անում:

ԽԱՆՈՒՄ—Վույ քոռանամ. այ մարդ ի՞նչ ա պատահել քեզ:

ՈՀԱՆ—Չոռ ու ցավ ա պատահել, հրես կիմանաք, թե ինչ ա պատա-
հել: (Վեր ե կենում տեղիցը յեվ ուզում ե դուրս զնալ):

ԽԱՆՈՒՄ—Ետ ուր, այ մարդ, ես ա որը մթնում ա:

ՈՀԱՆ—Կորչում եմ ես տանիցը: Անաստվածների տանը յես ապրողը
չեմ, իմ հավատն ետ լակուններն ուզում են կործանեն:

ԶԱՐՆԻՇԱՆ—Պապի ջան, կաց չայ խմի, վատներդ լվանամ. եսոր մեր
կոմսոմոլներն իրուկունը թատրոն են սարքելու, իրար հետ գնանք թա-
մաշա անենք:

ՈՀԱՆ—Թատրոն... վրաեղ են սարքելու:

ԶԱՐՆԻՇԱՆ—Ժամումը:

ՈՀԱՆ—Ժամումը... յես նրանց ժամ շանց կտամ: (Վերդոված դուրս ե
գնում: Զառնիշանը ըվարած ե: Խանումն իլիկը ցած ե դեռում յել զիմում
Զառնիշանին):

ԽԱՆՈՒՄ—Շալս տուր յետեիցը դնամ: (Զառնիշանը տալը տալիս ե)
Զայիի-բանի պատրաստություն տես, երեխեքս հրես ուր վոր ե կզան: Հաց
կուտիք, զուռը կփակեք ու կդնաք թատրոն, մեզ չսպասեք:

ԶԱՐՆԻՇԱՆ—Լավ, նանի ջան: (Խանումը ըստալ դուրս):

(Զառնիշանն սկսում ե տունը կարգավորել):

ՎԱՐԱԳՈՒՅՑ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐԿՐՈՐԴ

Տես. 1.

ՏԻՐԱՅՈՒ ԲԱԴԴԱՍԱՐ (մենակ)

ՏԻՐԱՅՈՒ ԲԱԴԴԱՍԱՐ—(Ակնոցները իրին դրած, ձեռքին բռնած մի լրագիր, ինքն իրեն կարգում է, քախսին նոտած) Հայ զիրի հայ... սաղ աշխարհը թալանեց, յեկեղեցական փողերը կերավ, դպրոցի փողերը կերավ, վանքաւ պատկան յեղն ու պանիրը տակովն արավ, կաշառքով գործակալ գառավ, Արտեմի ջաղացը խեց, Ակորի բարի կեսը զավթեց, խաչ ու ավետարանը ձեռին սրան ու նրան դժոխքով ու սատանեքով վախեցրեց, ու հիմի հալա տեսեք ինչեր ա զրում... (Գլուխը քափառառում է ու բերքը տուռ. տալիս): (Դրսից լսվում է նազի ձայն, ապա նիսամի ձայնը):

ՈՀԱՆ—(Դրսից) Տիրացու Բաղդասար, տանն ես:

Տ.-ԲԱԴ.—(Տեղից վեր կենալով) Տանն եմ, համեցեք: (Դուռը բացվում է, ներ են մտնում նիսամի յիկ Սաբոն):

Տես. 2.

ՆԱ, ՈՀԱՆ ՅԵՎ ՍԱՔՈ

ՈՀԱՆ և ՍԱՔՈ—(Միասին) Բարի իրիկուն քեզ, տիրացու Բաղդասար:

Տ.-ԲԱԴ.—Այ, աստծու անհատնելի բարին ձեզ համեցեք, Ոհան ապեր, համեցեք, աղա Սաքո, համեցեք, նստեցեք, ես վոր քամին ա ձեզ դեսը բե-

րեւ իսեր ըլի, իմ աչքի, իմ զլսի վրա յեք յեկել. մի նստեցեք, տեսնեմ քեֆներդ, հալներդ վնաց ա... (Տեղավորվում են քախսի վրա):

ՍԱՔՈ—Ե՞ս, տիրացու Բաղդասար, ել հալ ու քեփ ա մնացել... Բախչիս կեսը խլել Մոպը հն շինել, տանս ոթախներից մինը խլել—կոպերատիր չիս բաց արել վրես անհատական տուրք են դրել 300 մանեթ, ինձ ել ձայն նազուրկ արել վոր վոչ մի տեղ ձեն-ծպտուն չհանեմ, անունս ել դրել են կուլակ Սաքո. գե, քեզ եմ հարցնում, տիրացու Բաղդասար, քեփս վնաց կըլի... կուլակ Սաքո. գե, քեզ եմ հարցնում, տիրացու Բաղդասար. մի

ՈՀԱՆ—Եդ դիս թողեք: Ի՞նձ անգաճ արա, տիրացու Բաղդասար. մի անգաճ ել եմ ասել, համա հիմի ուրիշ զայզի յա բանը. ես յես, ես ել մեր գեղի իշխան Սաքոն, յեկել ենք ու քեզ՝ առաջ խնդրում ենք, թե ինդիրը չընդունես, հրամայում ենք...

Տ.-ԲԱԴ.—Ոհան ապեր, խոսքդ շաքարով. ետ ել ինչ խոսք ա, վոր սում ես, յես ձեր խոսքը կարամ կոտրեմ. ինչ հրամայեք, պատրաստ եմ:

ՈՀԱՆ—Շատ ապերս. ելի մեծի ու պստիկի պատիվ իմացողը հներն են, մենք ենք, թե չե՞ ջահելները մեզ կերան:

ՍԱՔՈ—Հա, հա, ել ասում ես, մեզ երեցին, խորովեցին, անդանակ մորթեցին, անկրակ դաղեցին... յաշեյկեն ենքան չե, ախ ես կոնցոմոլինին, կոնցոմոլինին, անդանակ մորթել են, անշամփուր խորովում են...

ՈՀԱՆ—Դու խոսքիս քամակին մտիկ: Տիրացու Բաղդասար, եսոր, հենց ես սհաթիս դու պետք ա մեզ խոսք տաս, վոր տերտեր իս ձեռնադրվելու: Դրա համար ել յեկել ենք:

Տ. ԲԱԴ.—(Զարմացած) Ախըր, Ոհան ապեր...

ՈՀԱՆ—Ել ախըր-մախըր չկա, վճռած բան ա: Ես սհաթիս վեր կկենաս, հրեն իշխան Սաքոյի ձին թամքած, հազիր իրան դուանը կապած, կնստես ու մինչև գործակալի տունը մին կքշես: Հրես ուր վոր ա Գարսոն ել կզա, հետը խոսացել ենք, վոր փող բերի, տասը չերվոն կտանես՝ կտաս գործակալին, կասես—ետ աջահամբուր ա, խոսացիր մի քսան չերվոն ել: Հինգ չերվոն ել կտաս, շոր-մոր կառնես, մնացածն ել մենք կառնենք տիրուհուց. մին ել յեկող շաբաթ եսոր, դու պետք ա ժամումը պատարագ անես: (Դրսից ձայն ե տալիս Գարսոն):

ԳԱՐՍՈՒ—(Դրսից) Տիրացու Բաղդասար, տանն ե՞ս:

Տ.-ԲԱՂ.—Համեցեք, Գարսո ջան, պանն եմ, համեցեք: (Գարսոն ներս):

Տես. 3.

ՆԻԱՆՔ ՅԵՎ. ԳԱՐՍՈ

ԳԱՐՍՈ—Բարի իրիկուն ձեզ:

ԱՄԵՆՔԸ—Աստծու բարին:

Տ.-ԲԱՂ.—Գարսո ջան, համեցեք ես կողմը նստի: (Գարսոն նստում է):

ԳԱՐՍՈ—ՀՇ, բանը զլուխ ա գալի...

ՍԱՔՈ—Տն, մեր տիրացուն չի, կարա մեր խաթրը կոտրի, շատ ել թե տղեն սարսաղվել, կոմունիստ ա զառել:

ԳԱՐՍՈ—Փողի պայմանի մասին խոսել եք... Դե, տիրացու ջան, հո գիղաս, ել են վաղ վախտի պես առուտուր-բան չունեմ, իմն ել ես ա մնացել, թեթև շահով փող եմ տալի, մի կերպ զլուխս պահում: Շահն ել մի շահ չի, ամսական հարիր մանեթին տասը մանեթ. ետ տեսակ բարի գործի համար

իրեք հարիր մանեթ եմ մատաղ անում, կձեռնադրվես, տերտեր կդառնաս, կամաց-կամաց ժողովրդի միջքիցը կհանես, կտաս. թե չե լուսավորչու կրոնը վոտի տակ կորչում ա: Եսոր-եսոր, վոր յես ու ես տեսակ պատվական մարդիկ չմտածենք, ել ո՞վ մտածի. կոնցոմոլը ժամը կիսլի, աստվածն ու հավատը կվերանա գեղիցը...

ՈՀԱՆ—Եես ել ետ չեմ ասում... Դուք հո գիտաք, յես մի քյասիր մարդ եմ, ձեզ պես մարդկանց ու աստծու փեշը բռնած մի կերպ ասլրել եմ. ուզում եմ իմ պապի ճամբօվն ել գնամ ու եղածս ել մեռնեմ:

ՍԱՔՈ—Դրուստ ա, զրուստ ա, տիրացու Բաղդասար, ել յերկար միտք մի անիլ, թե վոր ուզում ես վոտի տակ չկորչենք, վեր կալ փողերն ու վեքսիլը դրի, մենք ել յերաշխավոր ենք. յեկեղեցին ել վոր ձեռներիցս գնա, լավն են ա խեղդվենք, ջուրը թափվենք. Կսա մի ժամ ա մնացել, մի խաչ ու ավետարան:

ԳԱՐՍՈ—Մարդու գործի նեղ վախտն ել վոր չհասնենք, ել ինչի՞ յենք պետքը. միտդ ա, վոր ուզում եյիր տերտեր դառնաս, խանգարեցին, փող չկար, թե զործդ զլուխ բերեն... Բախտդ հիմի յեկել ա դռանդ չոքել, քացի մի տալ. պարտքից ել վախիլ մի, յես զյուղբանկի նման չեմ, վոր ժամանակը լրանա թե չե, կովդ ծախել տամ պարտքիս տեղը. մեկ ել... զյուղբանկը քեզ փող չի տալ վոր զու գնաս տերտեր դառնաս:

ՈՀԱՆ—Դե, բոլ ա, վճռած բան ա, ես փողը, են ձին, վերկաց ու ճամբար ընկի:

Տ.-ԲԱՂ.—Ախը...

ՈՀԱՆ—Ախըր մախր չկա, շորերդ հավաքի:

ՍԱՅՐՈ—Ինձ վոր մնա, հենց ես սհաթիս տիրացու Բաղդասարը կզնա
ու մեր մեռած տերտերի փիլոնը կհազնի, ժամ կմտնի ու են կոնցոմոլներին
դուրս կանի խաչ ու ավետարանը ձեռին:

ԳԱՐՄՈ—Համա թամաշա կլի հա... ինչ տուր ու դմբոց կընկնի...

ՍԱՅՐՈ—Տուր ու դմբոց... հրեն մի քանի աղա ել հազիր, հենց ետպես
բանի յեն ճամբա պահում, հենց ոյին կդնեն ետ կոնցոմոլների գլխին, վոր
չեն իմանա, վոր ծակը մտնեն... չը՛, տիրացու Բաղդասար, ինչ կասես ես
բանին. ժողովուրդը մեր կողմն ա:

ԳԱՐՄՈ—Մեր կողմն ա, թե խոսք ա... Հազար-հազար տարի ժողո-
վուրդը ժամին կպած, երկու գյաղի խոսքով հավատն ուրացավ... Ա՛րի, այ
տիրացու Բաղդասար, արի գնանք տիրուհուց շորերն առնենք, ժամ գնանք.
Վալլահ, լավ ա հրամայում իշխան Սաքոն, արի եսոր մենք մերն անենք ու
թե զալմաղալ դուրս գա, ինչ շահ, ինչ բան, քիսես թափ կտամ, չեմ թողնի,
վոր մի մարդ ելա քու մի մազին դիպչի:

Տ.-ԲԱԴ.—Տնաշեններ, վորտեղից սկսեցիք, ուր հասաք. ուղում եք
հենց իմ տանն ինձ տերտեր ոծե՞ք...

ՍԱՅՐՈ—Թե դրուտն ուղում ես իմանաս, հենց միտքներս ետ ա, թե
եսոր վոր մենք ժամը խլելու համար կոիվ չսարքենք, մին վոր ժամը մեր
ձեռից գնաց, ել կոնցոմոլի ու յաշեյլի ձեռիցը յետ խլողը չենք: ի՞նչ
կասես, Ոհան ապեր:

ՈՀԱՆ—Ետ անորեն բան կլի, կիսայտառակվենք. լավն են ա, թող տի-
րացու Բաղդասարը գնա գործակալի մոտ ու տերտեր ձեռնաղբվելու համար

քաղաք գնա, վոր ձեռնաղբվի ու յետ գա, ժամը մենք յետ կխլենք, սադ
գեղը վոտի կհանենք. յես ինքս իմ ձեռովը կկոտրեմ դուռն ու տիրացու
Բաղդասարին, տեր Բաղդասար շինած ժամը կտանեմ. ետ ձեր ասածն անո-
րեն բան ա:

ԳԱՐՄՈ—Ե... անորենս վորն ա և... բալշեկնին ինչ վոր անում են,
որենքով են անում... Վեր կաց, վեր կաց, տիրացու, վեր կաց գնանք տեր-
տերի շորերը հազիր. ժամի սրարողությունը գիդաս, ձենդ ել զվարթ ա:

ՈՀԱՆ—Յես համաձայն չեմ. դա անորեն բան ա, մեր պայմանը հենց
ա, վոր տիրացուն գնա որինավոր ձեռնաղբվի:

ՍԱՅՐՈ—Ա՛յ մարդ, հենց իմանանք, թե դու յեպիսկոպոս ես, վեր կաց
ձեռնաղբի ու թող գնանք:

Տ.-ԲԱԴ.—Ախ՛ըր...

ԳԱՐՄՈ և ՍԱՅՐՈ—Ել ախըր չմնաց:

ՍԱՅՐՈ—Կոնցոմոլնին ժամը թատրոն են շինում, միջին մեյմուն են
պար ածում, վեր կացեք գնանք:

ՈՀԱՆ—Քրիստոսի հավատը ձեռք եք առել, ի՞նչ ա... տիրացուն թե
զործակալի մոտ չգնա, յես կթքեմ ետ դայդի բանի վրա:

ԳԱՐՄՈ—Ի՞ն, շաշ Ոհան...

ՈՀԱՆ—Շաշը դու յես, ասեղ մաշկող, ոձ խուզող...

ԳԱՐՄՈ—Ձենդ կտրի, տարին տասներկու ամիս թան լակող շուն:

ՈՀԱՆ—Տհ, յեթիմի տուն քանդող մեռելի շոր գողանող հառամ զա-
դա, ցորենի մի հատիկն ոխտն որ ես ուտում, յես եմ սովածը...

ՍԱՅՐՈ—Ամոթ ա, ամոթ, բանի յեք յեկել, թե կովի...

ՈՀԱՆ - Քեզ ասեցի, Սաքն, թե ետ կոպեկի համար հորը գերեզմանից հանող ու ծախողի հետ բան չըռնենք:

ԳԱՐՄՈ - Տո քոռանալու շուն, հորդ թաղելու համար գոնե-գուռն ընկած քելեխի փողի եյիր ման գալի, յեկար մի վոչխար տվի, փողն եսոր-եսոր ել չես տվել, յես եմ հորս գերեզմանիցը հանում, ծախում, թե դժւ...

ՍԱՐՄ - Չենդ կտրի, Գարսո, բանը խարաբ ես անում. պարտք ուզելու տեղ ես գտել... Դու հո գիտես, վոր ժողովուրդը մեզ հավատացողը չի, թե հավատա, Ոհանին ա հավատալու, ձենդ կտրի, մի ես բանը գլուխ բերենք ե...

ԳԱՐՄՈ - Գլուխ բերել, բան չկա, յես ել փող չեմ տալի, թող գա անտերտեր սատկի, անտերտեր ել շան պես հորը ցցեն:

ՈՀԱՆ - Մեղա քեզ տեր սատված... Չենց որուստ են ասում են կոնցոմոնին, թե ժամն ել, տերտերն ել, սատված ել հարուստների ձեռին խաղքու խաղալիք ա յե... Եսա հու զնում եմ յես ել հավատս ուրանամ:

Տ.-ԲԱՂ. - Ա՛յ մարդիկ, յեկել եք իմ տուն, բարով եք յեկել ի՞նչ եք կոխվ գցում. ամոթ ա:

ՈՀԱՆ - Ամոթ ա հա, ամոթ ա. քեզ համար ամոթ չի... Բան եր, ասեցինք, անում ես, թե չե, գործակալի մոտ ես զնում, թե չե...

Տ.-ԲԱՂ. - Ախըր...

ՈՀԱՆ - (Տեղից վեր և կենում. զայրացած) Ախըր - չո՛ո, ի՞նչ ախըր...

Տ.-ԲԱՂ. - Ախըր այ մարդիկ, մի համբերություն ունեցեք, ասեմ խոսքս յետով դարձեցեք գործակալի մոտ ե...

ԳԱՐՄՈ և ՍԱՐՄ - Ասա, ասա:

Տ.-ԲԱՂ. - Ախըր ետ վոր դարկում եք, ում մոտ եք դարկում. գործակալ կամ, վոր դարկում եք:

ՈՀԱՆ - Վո՞նց թե չկա, բա մեռել ա...

Տ.-ԲԱՂ. - Մեռել չի, համա մեռնելուց վատ բան ա արել:

ՍԱՐՄ - Դե ասա, ել մի յերկարացնի: (Բաղդասարը հանդիսավոր կերպով ակնոցներն ուղղում ե, վերցնում լրափրը լիվ կարդում):

Տ.-ԲԱՂ. - Դե, ականջ արեք, տեսեք ի՞նչ ա զրած: (Կարդում ե).

«Նախակ խմբագրաւրյան»

«Յես, Հարություն Տեր-Մարությանս, վոր քսանհինդ տարի քահանայիմ յեղել, իսկ վերջին տարիներս ել գործակալ, սորանով հայտարարում եմ, վոր սատվածը, քրիստոսը և սրբերը բոլորը հնարովի, շինծու բաներ են. զրանք հնարել են հոգեորականները և հարուստները նրա համար, վոր տղետ ժողովրդին ու միամիտներին խարեն: Ամբողջ քսանհինդ տարի յես խարել եմ ժողովրդին գոյություն չունեցող զրախտով ու գժոխքով, հրեշտակներով ու սատանաներով. խարել եմ քարոզելով, թե իբր արել, լուսինը, յերկիրը կայծակն ու ամպերը սատծու ստեղծածն են: Այժմ խորհրդային իշխանությունն իմ աշքերը բացեց: Յես հայտարարում եմ, վոր այդ բոլորը սուստ են: Յես ինձ հայտարարում եմ անսատված, հանում եմ քահանայական զգեստս, խաչի ու ավետարանի տեղ ձեռքս եմ առնելու գութանի մաճն ու մանկաղը: Թող մյուս քահանաները հետևեն իմ օրինակին: Այսուհետև յես մոշկելու յեմ Հարություն Մարությանց»:

(Ամենիր ըվարած նայում են իրար: Պատկեր):

ԳԱՐՍՈՒ—Հարություն Մարությանց... Այ, քու հերն անիծվի, Մարությանց... քոս Մարութի թոռը...

ՍԱԲՈՒ—Մարությանց չե, Ավազակ Ավազակյանց...

ՈՀԱՆՆԵ—Հիմի հաստատ գրած ա՝ ետ ամենը, թէ սարքովի բան ա...

Տ.-ԲԱԴԻ.—Գրած ա... տպած ա, տպած... Ուրիշ «նամակ խմբագրության»-ը մանր տառերով են տպում, սա հենց մեծով ա տպած:

ԳԱՐՍՈՒ—Սուտ ա, սարքած բան ա, ետ գաղեթը բալշեկի գաղեթ ա, մեջն ինչ-վոր զրում են, դիփ սուտ ա, հնարովի, սարքովի:

Տ.-ԲԱԴԻ.—Զեք հավատում, ախտեր, առեք դուք ել կարդացեք:

ՍԱԲՈՒ—Կարդամ, չե, չե, մի պաշեմ դնեմ ճակատիս մենակ ետ ա զրած. բա գրած չի, թե ետ Մարությանց շունը վոնց եր մի չհաս պսակի համար հիսուն մանեթ առնում...

ԳԱՐՍՈՒ—Բա գրած չի, թե մի քյասիրի մեռել չորս որ հոտում եր իր տանը, ու ետ ավազակի տղա ավազակը չեր թաղում, թե ինչ ա, փողը քիչ են տալի...

Տ. ԲԱԴԻ.—Զե, ետ ասածներդ գրած չի, համա հրես մեր գեղիցը մի փիս բան ել կա գրած:

ՍԱԲՈՒ—Ի՞նչ կա, ով ա զրել...

ԲԱԴԻ.—Թե ով ա զրողը, հայտնի չի, ստորագրած ա—«թղթակից բատրակ», համա Գարսոյին շատ անպատիլ են արել:

ԳԱՐՍՈՒ—Ի՞նչ Գարսո, ի՞նձ...

ԲԱԴԻ.—Հա, քեզ. այ, հրես զրած—«Վաշխառու Գարսոն»:

ՈՀԱՆՆԵ—Կարդա, կարդա, մի իմանանք ինչ ա զրել:

ԳԱՐՍՈՒ—Քեզդ եկավ, համ, քավթառ, քու սրտիցն ա խոսում:

ՈՀԱՆՆԵ—Գավազանս հրես քաշալ գլխիդ փոր կոտրեմ, են վախտը կիմանաս սիրտը (Ուզում ե հարձակել):

ԳԱՐՍՈՒ.—Տն մի ետ շանը...

ՍԱԲՈՒ.—(Միջամտելով) Ի՞նչ եք իրար ուիս կոծում, վեր ընկեք տեղներդ:

ԳԱՐՍՈՒ.—Տն, չես տեսնում ես քավթառն ել ա բալշեկի դառել թող մի հոգին կրնկովը հանեմ ե... ինչ ունեմ չունեմ դիփ ջուրը կածեմ, փողի սելավով կիսեղեմ սուղն ել զակոնն ել...

ՈՀԱՆՆԵ.—Կամաց, կամաց... են վախտերն անց կացան, վոր դատավորը կաշառք եր ուտում:

ՍԱԲՈՒ.—Ոհան-ապեր, դույնել ես խարար ըլել, հա: Զըլի կոնցոմոլ թոռներդ քեզ հեղափոխել են:

ՈՀԱՆՆԵ.—Իմ կոնցոմոլ թոռները դրա աչքի լիսը հանեն: Յես մի հավատացյալ մարդ եմ, իմ հալալ աշխատանքին, համա հրեդ զրա պեսերի արարմունքը, վոր տեսնում եմ, յես ել եմ հեղափոխում: Իմ ուզածն ինչ ա ասում եմ հաստատ համոզվեմ, թե գործակալի զրածը սուտ ա, թե զորթ. զրա համար եմ ուզում, վոր մեր զեղից զրածն ել կարդա, վոր հավատամ, թե Գարսոյի մասին դուզ բան զրած ըլի, կհավատամ, վոր գործակալի նամակն ել ա հաստատ:

ԳԱՐՍՈՒ.—Զեմ թողի, վոր կարդա:

ՈՀԱՆՆԵ.—Թե սխոսը չես կերել բերնից խի՞ յա հոտ գալի...

ՍԱԲՈՒ.—Կոիվը թողեք: Տիրացու Բաղդասար կարդա:

ԲԱԴԻ.—Կարդում ե) «Թղթակցություններ»—«Վաշխառու Գարսոն»—«Մեր զյուղում կա Գարսո անունով մի վաշխառու, վորը շահով սրան-նրան փող ե տալիս: Յերկու տարի սրանից առաջ, նա հինգ մանեթ ե տվել մեր համագյուղացի Արսեն Սարգսյանին: Սարգսյանը...

ՍԱԲՈՒ.—(Ընդհանով) Սարգսյանցն ով ա...

ԲԱԴԻ.—Լոշտականց Արսենն ա, ելի: (Նարունակում ե) «Սարգսյանը յեր-

կու տարվա ընթացքում, շահի տեղ—վեց որ ձրի աշխատել և Գարսոյի համար...

ԳԱՐՍՈՒ.—(Ընդհատելով) Սնւտ ա. ոխտն որ բան ա արեւ իրան հալալ հախն առել:

ԲԱՂ.—(Շարունակում ե) «չորս հավ ե տվել Գարսոյին, մի փութ լորի, և պարտքը դեռ ելի մնում է պարտք: Գարսոն վեց ամիսը մի անգամ մուրհակը փոխում ե շահին-շահ վրեն գալով՝ հինգ մանեթը շինել ե տասնեռութմանեթ: Համապատասխան մարմինները թող ուշք դարձնեն և բատրակ Արսենին ազատեն նրա ճանկերից: Թղթակից բատրակ»:

ԳԱՐՍՈՒ.—(Զայրացած խլում ե բերբը յեվ պատռում) Յես քու գրողի...

ՍԱՐՈՒ.—Զնւր ես պատռում, հո ետ մի հատը չի, հաղարներով են տպում. հիմի սաղ աշխարհն իմացել ա, պրծել: Ոհան-ապեր, վեր կաց գնանք, ել մեր բանը զլուխ չեկավ:

ՈՀԱՆ.—Չե, ախապեր, ել յես ձեղ հետ գալիս չեմ. դուք գնացեք, ձեր ճամբեն ուրիշ ա, իմն ուրիշ, յես ճամբես ծռեցի...

ԳԱՐՍՈՒ.—(Դառն ծիծաղով) Հա, հա, հա... Գնա կոմունիստ դառ, յա-չեյկա մտի, կոնցոմոլ գրվի... (Սահոն ու Գարսոն դուրս են զնում):

ՏԵՍԻԼ 4

ՈՀԱՆ յեվ ՏԻՐԱՅՈՒ ԲԱՂԴԱՍԱՐ

ՈՀԱՆ.—(Մազգաղ) Տիրացու:

ԲԱՂ.—Համմեն:

ՈՀԱՆ.—Խելքդ ինչ ա կտրում ես բաներիցը:

ԲԱՂ.—Վաներիցը:

ՈՀԱՆ.—Ա՛յ, ետ գործակալի գրածիցը:

ԲԱՂ.—Ի՞նչ պտի կտրի. ժողովուրդն ել ժամ չի գնում, նա յել տեսել ա, վոր ինքն ել չի կարում ապրի, մարդատեղ չեն գցում իրան, ձայնազուրկ են արեւ փարաջեն հանել ա, ելի...

ՈՀԱՆ.—Բա Քրիստոսը, աստոծը...

ԲԱՂ.—Ե... Ոհան ապեր, դե, ինչ ասեմ, Քրիստոսն ու աստվածն ել, Քրիստոս ու աստված են, ելի...

ՈՀԱՆ.—Խի չեն քարե կարկուտ վեր ածում անհավատների զիխին:

ԲԱՂ.—Եսիմ:

ՈՀԱՆ.—Բաս ուրեմն կոնցոմոլնին դրուստ են ասում ելի, թե Քրիստոս ու աստված չկա:

ԲԱՂ.—Յեսիմ:

ՈՀԱՆ.—Բա սրբերն ու ավետարանը սուտ են, ելի:

ԲԱՂ.—Յեսիմ:

ՈՀԱՆ.—Ի՞նչ ես «յեսիմ, յեսիմ» անում, ուրիշ ջուղար չունես, թե քու միտքն ել ա իմիս պես պղտորվել...

ԲԱՂ.—Ել ի՞նչ ջուղար տամ, ինքդ աչքովդ տեսում ես, ելի: (Ներս մտնում ժիրացու Բաղդասարի հարսը—Զավահիրը):

ՏԵՍԻԼ 5

ՆՐԱՆՔ յեվ ԶԱՎԱՀԻՐ

ԶԱՎԱՀԻՐ.—(Զնկատելով Ոհանին) Մի հանդես եր, մի թատրոն եր, մի թամաշա յեր հայրիկ ջան, մի թամաշա...

ԲԱՂ.—Սնւտ, մարդ կա:

ԶԱՎԱՀԻՐ.—Վայ, Ոհան պապն ե: Զերոնք ել եյին եստեղ, դիփ. դիփ սաղ գեղը... ժամը դմբդմբում եր:

ՈՀԱՆ.—Զավահիր ջան, ի՞նչ արին. ասեցին մեյմուն են պար ածելու:

ԶԱՎԱՀԻՐ.—(Ծիծաղելով) Ի՞նչ մեյմուն, պապի ջան... Զեր Արտոն միտինկը բաց արեց, վողջույնի ճառեր ասեցին. յեկեղեցին ինչպես սիրուն զարդարել են, լենինի պատկերը կախել...

ՈՀԱՆ.—Բա ժողովուրդը տուր ու կարու գումարքեց...



ՀԱՅԱՍՏԱՆ

ԶԱՎԱՀԻՐ.—Ժողովուրդն ենապես ուրախ էր, ենպիս ծափ եր տալի, կոմսոմոլին գովում... (Դրսից—հեռվից լսվում են խառը յերգեր, վոր յերգում են հանդիսից ցրվողները—«Մենք դարբիններ ենք» յել այլ հեղափոխական յերգերից կտրներ): Ժողովուրդը նրանց հետ ա, մեղ հետ ա, մեղ հետ պապի ջան, յես ել եմ կոմսոմոլ զրվում, յես ել... (Ներս և մՏնում Յողիկը):

STUHL 6

ՆՐԱՆՔ լԵՎ ՑՈՂԻԿ

ՑՈՂԻԿ.—Պապի ջան, արի գնանք տուն, տատն ասեց, վոր եստեղ ես:
ՈՂԱՆ.—Գնանք, բալա ջան, գնանք: Տիրացու Բաղդասար ներողու-
թյուն կանես ավել-պակաս գլխացավանքի համար, մեր բանը զլուխ չեկավ:

ԲԱՂ. — Վոչինչ, Ոհան-ապեր, աշխարհի բան ա, ես ել կանցնի...
ՑՈՂԻԿ. — Ի՞նչը կանցնի, տիրացու. խորհրդային իշխանությունը, թե
կոմսովովը: կանցնի ու զու յել տեր-տեր կդառնաս, ժամը քեզ համար ենք
դարդարել... ժանդուած ավետարանի թուղթ. .

ՈՀԱՆՆ. — Գինանք, այս վորդի, ի՞նչ ես մարդուն իրան տանն անպատիվ անուռ... Տիրացու ջան նեղանալ մի:

ԲԱԴ.—Ոհան ապեր, վոչինչ, ջահել ա, խ յեմ նեղանում: (Ոհան յեկ Յոդիկ դռան մոս):

ՅՈՒՂԻԿ.—Զահել ա, բաս, ջահել ա, խելքը մի կտրտւմ. մենք ձեզ պես-ների հետ հայ գործ կունենանք: Զավահից, գուց չմնանաս, շուտ յեկ, իրիկունը գոնքաց խառը նիստ է:

ԶԱՎԱՀԻՐ. — Լավ: (Ոհան լեզ Յոդիկ ոստր):



«Ազգային գրադարան»



NL0332455

ԳԻՆԸ 50 ԿՈՎ

f 974

27430